

կուտայ վիրաւորեալին իր մօտ գալ, ու ամէնուն ներկայութեան կը բժշկէ զանիկա» (Ք. Ե. Ս. հատ. Է. մասն Բ. էջ 475):

10. Այն սեղը՝ ուր Ս. Պօղոս կը պահէ Ս. Սեփա-
նոսը քարկոծողներուն զգեսսները. — Դարձեալ Փելլիքս
Փապրի կը գրէ. «Ոսկի դռնէն շուտով մը իջնելով՝
վար իջանք սանդուխէ մը՝ ուր քարուտ տեղի մը մէջ
մեծ քար մը կար վրան տափարակ: Ասոր վրայ է որ
Ս. Ստեփանոսը քարկոծողները դրած էին իրենց հան-
դերձները՝ զիւրութեամբ քարեր առնելով ծանր հար-
ուածներու տակ սպաննելու սուրբը: Սօղոս կը վկայէ
այս տեսարանին, լեցուած հրէութեան եռանդով կը
պահէ զգոտները, որպէսզի անոնք ազատօրէն կարե-
նան քարերը վերցնել ու նետել. ո՛ր և է մէկէ աւելի
Սօղոս կրնար այդ գործը կատարել: Այս քարին վրայ
դրուած հանդերձներուն մօտ նստած էր ան, զայրա-
նալով ընդդէմ Ս. Ստեփանոսի և հայհոյելով զՔրիս-
տոս» (Ք. Ե. Ս. հատ. Ը. մասն Բ. էջ 461):

11. Արմաւենիին աւանդութիւնը. — Եկեղեցական
աւանդութեան համաձայն, կը կարծուի թէ Գեթսե-
մանիի արդի պարտէզին մօտերը Դ. զարուն կը տես-
նուէր արմաւենի մը, ինչպէս կը վկայեն Պորտոյի ան-
անուն ուխտաւորը և Կիւրեղ Երուսաղէմացին, որուն
խօսքերն են. «Արմաւենին վկայէ ի ձեռն ոստոցն, որ
կայր ի վերայ ձորոյն, և տայր զոստո իւր այնոցիկ,
որ գոհութեամբ ի ձեռն օրհնութեան ընդ առաջ ելա-
նէին» (Կոչ. Ժ.):

Կ'ըսեն թէ այս արմաւենին վկայ մըն էր այն ար-
մաւենիի ձիւղերուն զոր ըստ Աւետարանի (Յովն. ԺԲ.